Այս տարի, բացի հացն ու գինուց, ամենայն կենսական պիտոյքները համեմատաբար թանգ են, քան թէ անցեալ տարի. այսպէս մսի ֆունտը 9 կ. է, Զանգվի ձկան ֆունտը 35—40 կ., իւղինը՝ 50—60 կ., խաւիարինը՝ 1 ր. 60 կ., մի հաւը 60—70 կ., 2 ձուն 5 կ.։—Եղանակները մինչև մօտ օրերս շատ տաք էին անցնում. այժմ ձիւն է գալիս և ցուրտը խիստ է. ծառերը քիչ էր մնում, որ ծաղկէին, այժմ կարող են վնասվել։—

«Մշակի» ընթերցողներից խոնարհաբար խնդրում եմ, որ սորա № 229-ի առաջին երեսի երրորդ սիւնեակի մէջ տպված հետևեալ տողերը կարդալ այսպէս։ «Ոչ ոք չէ մտածում որ իւրաքանչիւր տարի 500—700 հայ և թուրք ծնված երեխաներից՝ միայն 50 են ապրում հ ա ր ի ւ ր ի ց՝ թէ հայ և թէ թուրք միտները մեռնում են ըստ մեծի մասին ջրի և օդի անմաքրութեան պատճառով»։ Խնդրում եմ «Кавказъ» լրագրի յարգելի խմբագրութիւնից ևս, որ վերոյիշեալի պէս ուղղէ իր № 350-ի մէջ հաղորդած տեղեկութիւնը, որը քաղել է «Մշակի» վերոյիշեալ №-ից։ Մի ուրիշ անգամ առիթ կունենամ «Մշակի» ընթերցողներին ցոյց տալ ճիշդ թուերով, որ այդ տեղեկութիւնը չափազանցութիւն չէ մեռնողների նկատմամբ, այլ մինչև անգամ փոքր ինչ պակաս եմ ցոյց տուել, ձեռքումս չունենալով թուրք երեխաների չափաբերականը առ այժմ։

Այս երեկոյ կլուբում ե օ լ կ ա յ էր, այդ պատճառով այնքան մեծ էր բազմութիւնը, որ ասեղ ձգելու տեղ չը կար։ Այդ միջոցին մի անսովոր թնդիւն դղրդեց բազմութեանը. լացի և վայնասունի աղաղակը չփոթեց ամենքին. մինը կոչում էր «այրվում է», միւս կոչում էր «քանդվում է»։ Բանը նորանումն էր, որ մի երիտասարդ բժիշկ իր դ ա մ ի հետ մտնելով կլուբի կողմնակի սենեակներից մէկը, տեսնում է, որ բենզալեան հրափամփուշտներ են դիզված՝ տնդղելու ժամանակ մինը բռնկում է և վառում միւսներին, որից ահագին ճայթումն և բոց է լինում և որը հալիւ են հանդցնում։ Սարսափած ժողովուրդը քիչ է մնում երեխաներին ոտքի տակ տրորէ փախչելու համար։ Ի՞նչ կը լինէր ժողովրդի դրութիւնը, եթէ շուտ չը կարողանային հանդցնել. ժամանակ չէ՞ արդեօք, որ մեր քաղաքն էլ ունենայ հրաշէջ մեքենաներ։

Ն ո ր ա յ ր

ՆԱՄԱԿ ԴԶԼԱՐԻՑ

—

Դեկտեմբերի 28-ին 80

Ուղարկում եմ 43 ռուբլի Հայաստանի սովատանջներին հասցնելու համար, որը նուիրել են մի քանի անձինք. ուղարկում եմ և ցուցակը, որը խնդրեմ տպէք ձեր լրագրում։

Խ. Ղօրղանեանց 10 ր., Ե. Թավաբեկեանց 10 ր., Գ. Աբրահամեանց 5 ր., Յ. Աստուածատրեանց 5 ր., Գ. Բօթաեանց 5 ր., Մ. Սվազլիկեանց 5 ր., Մ. Թումանեանց 3 ր։

Մկրտիչ Անանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 15 յունվարի

Մեր քահանաները կարող են շատ բան անել, եթէ ուզենան։ Ահա բերում եմ օրինակը։

Ամսիս 11-ին, կիրակի օրը, Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական պ. Գալուստ Ղարիբեանը մի ուրախ հացկերոյթ էր պատրաստած Մողնու միաբաններին պատուելու համար։

Առաջարկվում էին տեղական սովորութեան համաձայն գինով լիք բաժակներ զանազան անձանց բարեմաղթութիւններով։ Պարոն Յովհաննէս Տէր-Նիկողոսեանը, որ սեղանի կառավարիչ էր (թամադա), մասնաւորից անցնելով դէպի ընդհանուրը՝ առաջարկեց ազգային անմահ բարերարաց յիշատակի համար բարեմաղթութիւններ, ի միջի որոց և այն անձանց կենացը, որոնք իրանց ունեցած կօպէկը չեն խնայել կիսել խեղճերի հետ։

Բարեպատեհ միջոց համարելով, այդ ժամանակ ներկայ եղող քահանաներից մինը բացատրելով ընդարձակ բարեգործութիւնների նշանակութիւնը՝ նկատեց, որ մենք պարտական ենք, նաև խրախուսելով, գոհ լինել այն անձինքներից, որոնք իրանց ունեցածի մի տասներորդ, մի հարիւրերորդը չեն խնայում իրանց կարօտեալ եղբայրների համար։ Բաւական չէ միայն ցանկալ, բաւական չէ այդ առիթով միայն բաժակներ դատարկել, աւելացրեց նա, այդ չէ նշանակում թէ մենք նորանց սիրեցինք, այլ և պարտական ենք գ ո ր ծ ո վ ապացուցանել, որ, այո՛, մենք սիրում և օգնում ենք մեր կարօտեալ եղբայրներին, տաճկահպատակ մեր սովատանջ եղբայրներին։

Զը գիտեմ արժ. հօր խօսքերն էին պատճառը, թէ սիրտ շարժող երգասացութիւնները, որոնք կատարվում էին իւրաքանչիւր մի անմահ բարերարի անուան յիշատակութեան ժամանակ, թէ խնդրի նուիրականութիւնը, ինչ և իցէ մի վայրկենի մէջ բոլոր ներկայ եղողների նուէրները արդէն պատրաստ էին, որի գումարը այս տողերի հետ ուղարկվում է խմբագրութեանդ, խնդրվելով հասցնել ուր հարկն է։

Անհատական նուիրատուների անունները։ Բար. Մուշեղ քահանայ Տէր-Ղևոնդեան 1 ր., Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանց 1 ր., Պ. պ. Յովհաննէս Տէր-Նիկողոսեանց 3 ր., Յովսէփ Տէր-Աբրահամեան 3 ր., Սարգիս Վարդանեան 3 ր., Յակոբ Պապոյեան 3 ր., Գալուստ Ղարիբեան 3 ր., Գրիգոր Լազրեան 3 ր., Գրիգոր Ղանդուրալեան 1 ր., Ղազար Տէր-Ղազարեան 1 ր., Սամսոն Բարամով 3 ր., Կարապետ Ղարիբեան 5 ր., և Եագոր Գրիգորեան Յարութիւնեանց 15 ր։ Ընդամենը ք ա ռ ա ս ո ւ ն և հ ի ն գ (45) ռուբլի։

Մ ի հ ի ւ ր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը։ «Ցանկացողները մասնակցելու Հ ա յ կ ա կ ա ն բ ա ր ե գ ո ր ծ ա կ ա ն ընկերութեան կանոնադրութեան նախագծի քննութեանը, հրաւիրվում են յունվարի 25-ին, կիրակի օր, առաւօտեան 11 ժամին չնորհ բերել Արծրունու թատրոնը։ Առաջին ժողովը եղաւ յունվարի 4-ին, իսկ կիրակի օր կը լինի երկրորդ ժողով, նախագծի քննութիւնը շարունակելու նպատակով։»

—

ԲԱԳՈՒԻՑ հեռագրով խնդրում են մեզ յայտնել մեր լրագրի մէջ, որ «Մարդասիրական» ընկերութեան ընդհանուր ժողովը լինելու է յունվարի 25-ին։

—

Կովկասեան բժշկական ընկերութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ կիրակի, յունվարի 25-ին, ԹԻՖԼԻՍԻ ժողովարանի դահլիճում լինելու է պ ա ր ա հ ա ն դ է ս յօգուտ գանձարանի, որ հիմնված է Կովկասեան բժշկների չքաւոր որբերին և այրիներին նպաստ հասցնելու նպատակով։ Տոմսակներ կարելի է ստանալ Շահվերդովի պավիլիոնում և Թիֆլիսի կլուբի (ժողովարանի) շվեյցարի մօտ։ Տոմսակների գինը տղամարդկանց համար 2 ռուբլ է, կանանց համար 1 ռուբլ։ Պարահանդէսը սկսվելու է երեկոյեան 9 ժամին։

—

Այս օրերս Թէլէթի ճանապարհի վրա աւազակները յարձակվելով հալաբարցի յայտնի գրաց Մայիի վրա, սպանել են նրան և խլել են նրանից իր հետ տարած մատաղացու ոչխարը։ Այս գրաց կինը սովորութիւն ունէր ամեն չաբաթ օր բորիկ ոտով Թէլէթ ուխտ գնալու։ Զարմանալի չէ, արդեօք, որ նա, որ ուրիշների ապագան գուշակում էր, չը կարողացաւ իմանալ իր սեփական գլխի դալիքը։ Ամբողջ Հալաբարը մեծ տխրութեան մէջ է գրաց կնոջ կորուստի պատճառով և ասում են, որ Թէլէթը խռովել է այդ աստուածապաշտ կնոջից, որովհետև նա նորերումս մի ուրբաթ օր խոզի միս էր կերել։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքում շարունակվում է ստորագրութիւնը յօգուտ կ. Պոլսի «Մխացեալ Ընկերութեան» այդ ընկերութենից ստացված ստորագրութեան թերթերի օգնութեամբ։ Նոյն քաղաքից մեզ գրում են, որ յունվարի 13-ին այդտեղ սաստիկ ցրտեր են սկսվել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Թիւրքաց կառավարութեան վերջին շրջաբերականը միատեսակ տպաւորութիւն չը գործեց այն պետութիւնների վրա, որոնց ներկայացուցիչներին նա յանձնվեցաւ։ Ինչպէս երևում է գերմանական և աւստրօ-ունգարական պաշտօնական լրագիրներից, Վիէննայի և Բերլինի կառավարութիւններին շրջաբերականը ուրախութիւն պատճառեց։ Փարիզի մէջ նա վատ տպաւորութիւն գործեց, որովհետև նա մի հարուած համարվեցաւ Բարտելեմի Սենտ-Իլերի ա-

---

ցիր նրանց ձեռքը։ Մայրս կատաղութեամբ վրա վազեց, ինձ բռնեց, և երկար կռվելով նրանց հետ, չէր թողնում, որ ինձ տանեն։ Դու բռունցքով զարկեցիր մօրս գլխին, նա ուշաթափ ընկաւ գետնի վրա և այնուհետև չը վեր կացաւ նա...

Մի ուրիշ մարդ, Մէլիք Դաւիթի փոխարէն, հարազատ դստեր բերանից լսելով այդ անէծքը, լսելով այդ բոլոր դատապարտական խօսքերը, կը զղջար, կը փոշմանէր իր եղեռնագործութեան համար, բայց նա, տեսնելով, որ իր մեղմ, գրաւիչ խրատներով չը կարողացաւ համոզել նրան, մտածեց վախեցնել աղջկան։

—Բայց ես չեմ կարծում, որ քո մօր յիշատակը այնքան վրդովեցնէր քեզ իմ դէմ, որքան մի ուրիշ բան...

—Ի՞նչ բան, հարցրեց Սիւրին, սրբելով աչքերից արտասուքը, որ հեղեղի նման թափվում էր մօր պատմութիւնը անելու ժամանակ։

—Այն բանը, որ ես քեզ խլեցի քո սիրականի գրկից... որը այսօր քո չնորհիւ ազատութիւն գտաւ... որի վերքերը դու զարմանում էիր բանտի մէջ... և որի հետ դեռ մտածում ես շարունակել քո հին յիմարութիւնները...

—Այդ բոլորը ճիշտ է, պատասխանեց Սիւրին սառնութեամբ։—Ես Ստեփանին սիրում էի առաջ, սիրում եմ և այս րոպէիս։ Այո՛, դու ինձ խլեցիր նրա գրկից և ես այդ չեմ ների քեզ։

—Եւ կաշխատես գրկին նրա գիրկն ընկել...

—Կաշխատեմ...

—Եւ կաշխատես Գենուազի իշխանութիւնը նրան վերադարձնել...

—Կաշխատեմ...

—Եւ կաշխատես յետոյ փախչել գնալ նրա մօտ...

—Կաշխատեմ...

—Բայց գիտես ես ինչ կանեմ...

—Դու ինձ կը մատնես... դու այդ բոլորը կը յայտնես խանին...

—Լաւ հասկացար, պատասխանեց հայրը կատաղի բարկութեամբ։—Բայց գիտես խանը քեզ ինչ կանէ։

—Խանը ինձ խեղդել կը տայ։

—Հիմա լաւ մտածիր, ի զուր տեղը մի բարկացրու հօրդ։

—Ես բոլորը մտածել եմ. ինձ մնում է երկու բան՝—կամ մեռնել, կամ «նրա» հետ ապրել։

Մէլիք Դաւիթը չէր կարծում, թէ կը հանդիպի այս աստիճան հաստատամտութեան իր աղջկայ կողմից։ Նա զղաց իր սխալը, որ խօսակցութիւնը ծայրայեղութեան հասցրեց, այս պատճառով փորձ փորձեց չարժել Սիւրիի գթասրտութիւնը։

—Ծերունի հայրը ներողութիւն է խնդրում քեզանից, Սիւրի, ասաց նա, բռնելով նրա ձեռքը։—Մոռացիր բոլորը, ես մեղաւոր եմ քո առջև, մեղաւոր եմ և քո հանգուցեալ մօր առջև...

Այդ միջոցին նրա աչքերում երևացին մինչև անգամ արտասուքի կաթիլներ։ Բայց Սիւրին թափ տուեց նրա ձեռքը և վեր կացաւ, ասելով։

—Ես կը մոռանայի բոլորը, եթէ հաւատայի, որ քո խոստովանութիւնը անկեղծ է։ Բայց դու խաբում ես ինձ։

—Աստուած, երկինք, գետնք վկայ, որ չեմ խաբում։ Դու զարթեցրիր իմ մէջ մեռած խիղճս, Սիւրի, դու կրկին վառեցիր ծնողական գութը, որ հանգած էր իմ սրտում։ Մօրդ ուրուականը գիշեր և ցերեկ հալածում է ինձ, հանգստութիւն չէ տալիս։ Նա կը ներէ ինձ, եթէ դու ներես։

Վերջին խօսքերը աղղեցին Սիւրիի սրտին։ Նա պատրաստ էր զրկել իր հօրը, համբուրել նրա շրթունքը, որ արտասանեցին այդ տխուր, ապաշխարութեան խօսքերը, որ առաջին անգամն էր լսում նրա բերանից։ Բայց այդ միջոցին վրանի մուտքի առջև արձանացաւ ծերունի ներքինապետի զայրացած պատկերը և լսելի եղաւ նրա սպառնական ձայնը.

—Դու, ասաց նա մէլիքին,—նախ քան մեղանչելը քո ընտանիքի, քո զաւակի և քո անբախտ կնոջ առջև, մեղանչել ես քո ազգի առջև, որի որդիքը քո հարստահարութիւններից ազատվելու համար, այսօր իրանց այրեցին։ Դու մեղանչել ես Յիսուս Քրիստոսի առջև, որովհետև ուրացար մեր սուրբ Գրիգոր լուսաւորչի կրօնը։ Ոչ ոք չի կարող ներել քեզ, մինչև ազգը և եկեղեցին չը ներեն քեզ։ Եթէ քո խօսքերը ճշմարիտ են, եթէ զարթել է քո մէջ խիղճը, գնա, մտիր Տաթևի վանքի մէջ, որ քո ձեռքով քանդեցիր, որի սրբութիւնները կոզոպտեցիր,—գնա մտիր նրա տաճարի մէջ և այնտեղ ներողութիւն խնդրիր։ Այն ժամանակ բոլորը կը հաշտվեն քեզ հետ, թէ ազգը, թէ եկեղեցին և թէ քո զաւակը։ Բայց քանի որ դու քո փառասիրութեան համար ոտնակոխ կանես ամեն սրբութիւն, ամեն մարդ անէծք կը թափէ քո գլխին։ Ի՞նչու ես մոլորեցնում այդ անբախտ աղջկան. ինչու ես աշխատում նրան գործիք շինել քո չար դիտաւորութիւններին։ Բաւական չէ՞, որ Տաթևի ամբողջ գաւառը տանջվում է քո ձեռքում, հիմայ կամենում ես Գենուազը ու Բարգիւշատն էլ ձեռք գցել։ Այդ չես կարող յաջողեցնել։ Այդ երկու գաւառները պատկանում են այն պատանուն, որի հօր իշխանութիւնը ոչնչացաւ քո սատանայական դաւաճանութեամբ, որը այդ կնոջ օրինաւոր նշանածն էր։ Բայց դու ոտնակոխ արեցիր, թէ քահանայի օրհնութիւնը, թէ աղջկայ սէրը....

Վերջին խօսքերը կրկին բաց արեցին Սիւրիի վէրքերը, կրկին զարթեցրին նրա մէջ վաղեմի դառն յուշերը։ Դէպի իր հայրը։ Մէլիք Դաւիթը մի քանի րոպէ մնաց չանթահարի նման պապանձված, և ոչ մի խօսք չը գտաւ պատասխանելու։ Ո՞րտեղից յայտնվեցաւ այդ սատանան. մթթէ նա լսում էր դրսից իր բոլոր խօսակցութիւնները։ Մէլիք Դաւիթը պատրաստ էր իր սուրը նրա կողքը խրել, այդ կը լինէր ամենադու պատասխանը նրա կարծիքով, բայց խանի ներքինապետի վրա ձեռք բարձրացնելու չափ նա քաջութիւն չունէր։ Այս պատճառով ասաց նա չար ծաղրածութեամբ.

—Մի հայ, որին կոչում են Ահմէդ, փոխանակ ուրիշներին խրատներ տալու, աւելի լաւ կանէ, եթէ նախ ինքը գնայ, մտնէ Տաթևի վանքը և կրկին ընդունէ քրիստոնէութիւնը...

Մէլիքի ակնարկութիւնը չափազանց վիրաւորական էր։ Ներքինապետը կծու կերպով պատասխանեց նրան.

—Ես այդ վաղուց կանէի, եթէ հարկադրված չը լինէի, Ահմէդ անուան տակ ծածկվելով, պաշտպանել իմ ազգայիններին ձեղպիսիների չարագործութիւններից։ Ես յոյս ունեմ, որ մեր Լուսաւորիչ պապը կը ներէ ինձ, որովհետև երբէք դաւաճանած չեմ նրա եկեղեցուն, այլ որքան կարողացել եմ, պահպանել եմ նրա դառները ձեղ նման գայլերից...

—Եւ դու կը վարձատրվես այդ ծառայութիւններիդ համար...

—Զը լինի թէ դիտաւորութիւն ունես ինձ ևս մատնելու, խօսեց ներքինապետը զայրացած կերպով.—հրամայեցէք, ճանապարհը ձեզ ցոյց կը տամ...

Մէլիքը վեր կացաւ և մրթմրթալով հեռացաւ։ Սիւրին և ներքինապետը մնացին միայնակ։

—Դու ի զուր բարկացրիր նրան, Ահմէդ, ասաց տիկինը.—Նա ամեն բան պատրաստ է անել։

—Անհոգ կացէք, տիկին, ոչինչ չի կարող անել, պատասխանեց ներքինապետը հանդարտութեամբ։—Նա ունի ինձ մօտ մի այնպիսի գաղտնիք, եթէ խանին յայտնելու լինեմ, իսկոյն նրան գլխատել կը տայ։ Ես հէնց այս գիշեր նրան զղալ կը տամ, որ նրա կեանքը իմ ձեռքումն է, և նա լեզուն կը քաշէ...

Խորին տխրութեան մէջ սկսեց տիկինը դիմել դէպի իր վրանը։ Նա իրան այնքան անբախտ էր զգում, որ լսում էր իր հօր մասին հարիւրաւոր վիրաւորական խօսքեր, բայց բարկանալու իրաւունք չունէր։ Ի՞նչ կարող էր ասել դառն ճշմարտութիւնների դէմ։ Նա ունէր մի հայր, որը ոչ երկնքում և ոչ այս աշխարհում մի հատիկ բարեկամ չունէր, որին դաւաճանած չը լինէր։ Նա մինչև անգամ յանցաւոր էր խանի մօտ, որի բարերարութիւնները վայելում էր։

(Կը շարունակուի)